

Չ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

ԲԱՆԱՆՈՒԾԱԿԱՆ . Առ կէս ունի ժանտաջուր ու ապակէ անօթի մը մէջ դնելով ձգէ մէջը որչափ որ պզտի մարդրիաներ ունիս , որոնք ՅԱ ժամուան մէջ կը լուծուին , ու զանգուած մը կը դառնան , աս զանգուածէն մէկ խոշոր մարդարիտ մը ձևացուր . յետոյ առ մէկ ճերմակ աղանի մը , զգուշութեամբ կտուցը բաց ու փող մը անցուր կոկորդէն ինչուան խախացողը , ու նոյն փողին մէջէն ձևացուցած մարդրիտդ ներս դրկէ , ու թող լըռ . չուր . իրեք օրէն մարդրիտը անոր ստամոքսին մէջ պնդացած կ'ըլլայ , որն որ մորթելով կրնաս հանել : Ըսող կայ որ մեծութեան կողմանէ երևելի մարդրիտները աս կերպով շինուած են , թէպէտ և մենք առանց ճշմարտութեանը երաշխաւոր ըլլալու՝ միայն իբրև հետաքրքրական նիւթ մը գրինք զուարճանայ կարգը :

ԲԱՆԱՆՈՒԾԱԿԱՆ . Ամէն մարդ փորձով տեսած կրնայ ըլլալ՝ որ երբ հեռուէն որսորդ մը հրացանը կը պարպէ , կամ թէ թնգանօթ մը կը նետուի՝ ձայնը լուռէնէն առաջ լոյսը կը տեսնուի . ասիկայ ուրիշ բան ըսելէ , բայց եթէ լոյսը քան զձայնը արագ կ'ընթանայ : Աս երևութիւն կրնանք իմանալ որսորդին կամ թնգանօթին մեզմէ ունեցած հեռաւորութիւնը . վասն զի գիտնալով որ ձայնը 1 մանրերկրորդի մէջ 333 մետրսն տեղ կ'ընթանայ , եթէ լոյսը տեսածնուս պէս՝ զարկերնիս 1 համրենք , ու քանի անգամ որ զարնէ անով աս 333 մետրը բազմապատկենք , կ'ելլէ որսորդին կամ թնգանօթին հեռաւորութիւնը : 'Նոյնպէս կ'իմացուի նաև կայծակին զարկած տեղը՝ երևցած լուսոյն ու լուռած որոտմունքին միջոցը համրելով ու վերինին պէս բազմապատկելով : Բայց գիտնալու է որ սաստիկ հով եղած ատենը ստոյգ չեւէր ըսածնիս :

ԹՈՒՆԲԱՆԱԿԱՆ . Վաճառական մը երկու մարդու ութական օգգա եղ կու տայ որ երթան ծախեն , օգգա դուրս այսչափ վարձք խոստանալով իրենց . ասոնցմէ մէկը ճիշդ ութը օգգա եղ առնող ամսն մը ունի եղեր , իսկ մէկալը երկու ամսն՝ մէկը հինկ օգգա առնող իսկ մէկալը իրեք . աս վերջինը շուտով մը իր մասը ծախելէն ետեւ , ամսնները գատարկ խանութ գառնալու ատեն՝ իր ընկերոջը կը պատահի , ու կը տեսնէ որ գեռ ամենին չէ կրցած ծախել . ուստի կ'առաջարկէ որ թէ ուզէ մնացածն ալ կէսուիկէս ընեն , ու վարձքը գործեալ իրեն շնորհէ . ընկերը կը հաւանի . բայց ինչպէս բաժնեն որ եղը ճիշդ չորս չորս օգգա իյնայ երկուքին . շատ աշխատեցնէ ետեւ երկուքն ալ զատ զատ կերպեր կը գտնեն , որ ասոնք են .

Ա . լուծումն .

Ենթադրենք վերը ըսուած իրեք ամսն .
ներուն չափը 8, 5, 3
Իրեքնոց ամսնը լեցուր , կ'ըլլայ , 5, 0, 3
Աս իրեք օգգան լեցուր հինկնոց ամսնին մէջ , 5, 3, 0
Իրեքնոց ամսնը նորէն լեցուր , 2, 3, 3
Անկէց երկու օգգան հինկնոց ամսնը լեցուր , 2, 5, 1
Հինկնոց ամսնը ութոցին մէջ պարպէ , 7, 0, 1
Իրեքնոց ամսնին մէջ մնացածը հինկնոցին մէջ գիր , 7, 1, 0
Յետոյ ութոց ամսնէն իրեքնոց ամսնը լեցուր 4, 1, 3
Աս իրեք օգգան գիր հինկնոց ամսնին մէջ 4, 4, 0
Այսչափ տեղափոխութիւններէն ետեւ՝ վերջապէս ութ օգգա եղը ճիշդ չորս չորս օգգա կը բաժնուի ութոց և հինկնոց ամսններուն մէջ .

Բ . լուծումն .

Լեցուր հինկնոց ամսնդ , 3, 5, 0
Աս հինկնոց ամսնէն իրեքնոց ամսնը լեցուր , 3, 2, 3
Աս իրեքնոց ամսնդ ութոցին մէջ պարպէ 6, 2, 0
Հինկնոց ամսնին մէջ մնացածը երկու օգգան իրեքնոցին մէջ գիր 6, 0, 2
Հինկնոց ամսնը նորէն ութոցէն լեցուր 1, 5, 2
Իրեքնոց ամսնին պակասն ալ հինկնոցէն լեցուր 1, 4, 3
Աս իրեք օգգան լեցուր ութոց ամսնին մէջ 4, 4, 0
Ասով առջինին պէս ութ օգգա եղը երկու հաւասար մաս կը բաժնուի :

ԳՒՒՏ . Մուշտակներու ու կենդանեաց մորթերու մետաղական փայլուն գոյն մը տալու համար , առ ունի մը զուտ արծաթ , կըտրուէ ու ժանտաջրի կամ բորակային թթուի մէջ գիր ինչուան որ լուծուի . աս լուծուած արծաթը տաք մոխրի վրայ գիր ինչուան որ ամսնին երեւոյ մար մը կապէ , ան ատեն մէկդի առ՝ ու զով տեղ մը գիր ու պաղելէն ետեւ մէջի բիւրեղացած արծաթի մասունքը ժողվէ : Երբ կ'ուզես գործածել քիչ մը աս արծաթէն առ ու զուտ ջրի մէջ լուծէ , ու մաքուր սպունգով մը մուշտակին վրայ քսէ . երբ կը չորնայ մետաղական փայլուն գոյն մը կ'առնէ , ու ամենին չցեցոտիր : Աս կերպով ողջ կենդանիներն ալ կրնաս աղուորցնել , բայց ամեն տարի բուրգերնին փոխելու ատեն նորոգելու է . իսկ մուշտակինը միշտ կը գիմանայ , որով յարգն ու արժէքն ալ կ'աւելնայ :